ԵԴ/0609/11/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի փետրվարի 22-ին ք.Երևանում

ուսումնասիրելով դիմող Գոհար Հովհաննիսյանի ներկայացուցիչ Հրաչյա Թորոսյանի բողոքի վերաբերյալ դատական գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 10-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Դիմող Գոհար Հովհաննիսյանի ներկայացուցիչ Հրաչյա Թորոսյանը 2020 թվականի հուլիսի 2-ին բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ թիվ 18130609 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ռ.Վարդանյանի՝ 2020 թվականի ապրիլի 24-ի և բողոքը քննարկելու մասին՝ ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Վ.Հարությունյանի՝ 2020 թվականի մայիսի 15-ի որոշումների դեմ:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունվարի 21-ի որոշմամբ գործն ըստ ընդդատության ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի փետրվարի 12-ին:

<u>Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. 2021 թվականի հունվարի 21-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել քննիչի գրությունն այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վարույթը կասեցված քրեական գործն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն[1]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի հունվարի 21-ի որոշմամբ արձանագրել է. *«(…)/Ն/կատի ունենալով, որ թեև Գոհար Բենիամինի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Հրաչյա Թորոսյանը բողոքը ներկայացրել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ռ.Վարդանյանի, ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վարչության պետի տեղակալ Վ.Հարությունյանի որոշումների դեմ, սակայն հետագայում քրեական գործն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն, իսկ վերջինիս՝ որպես վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրը Շիրակի մարզն է՝ Դատարանը գտնում է, որ Գոհար Բենիամինի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Հրաչյա Թորոսյանի բողոքի քննարկումն այլևս ընդդատյա չէ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին, և այն պետք է ուղարկել ըստ ընդդատության դատարան: (…)»*[2]:

---

[1] Տե՛ս նյութեր, հատոր 7-րդ, թերթ 52-54:

[2] Տե՛ս նյութեր, հատոր 7-րդ, թերթեր 52-54:

7. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ նշել է, որ. «*(…) Դատարանը, (…) արձանագրում է, որ Գ.Հովհաննիսյանի իրավունքներին ու օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշումները կայացվել են [քննիչի] և [դատախազի] կողմից, և դիմողը վիճարկում է այդ որոշումներով իր իրավունքների ենթադրյալ խախտման հարցը, հետևաբար՝ որպես վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայր պետք է դիտարկել Երևան քաղաքի դատական տարածքը, ուստի նշված բողոքն ընդդատյա չէ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Բացի այդ, «վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայր» հասկացությունը՝ պայմանավորված մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգի դատավարական էությամբ, միշտ պետք է դիտվի դատավարական որոշում կայացրած մարմնի գտնվելու վայրի դատական տարածքը քանի որ հետագա դատական վերահսկողությունը կրում է «post factum» բնույթ և դատարանը ժամանակային առումով քննարկում է նախկինում կայացված որոշման կամ կատարված գործողության (անգործության) իրավաչափությունը: Այլ է իրավիճակը նախնական դատական վերահսկողության դեպքում, ինչը հստակ ամրագրվել է համապատասխան օրենսդրական նորմերում:*

Դատարանը հարկ է համարում նաև անդրադառնալ այն հարցին, երբ բողոքը քննվում է քրեական գործի նախաքննության իրականացման դատական տարածքից դուրս գտնվող մեկ այլ դատարանում, և բողոքը բավարարվելու դեպքում, արդյոք բողոքը քննած դատարանը կարող է պարտավորեցնել իր դատական տարածքից դուրս գտնվող քննչական մարմնին վերացնել դիմողի իրավունքների խախտումը: Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը որևէ սահմանափակում այդ առումով չի նախատեսում և նույն հոդվածի համաձայն դատարանի վրա դրված չէ պարտականություն նշելու կոնկրետ քննչական մարմնին, որը պարտավոր է վերացնել արձանագրված խախտումները, այլ դատարանը բավարարվում է «վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին» որոշման կայացմամբ: Հետևաբար, բողոքը բավարարվելու դեպքում, դատարանի որոշումը ենթակա է կատարման այն քննչական մարմնի կողմից, որի վարույթում այդ պահին գտնվում է տվյալ քրեական գործը: Բացի այդ, հնարավոր են դեպքեր, երբ դատարանում բողոքի քննության ընթացքում մի քանի քրեական գործով քննչական ենթակայությունը փոփոխվի և, այդ պայմաններում, դժվար է պատկերացնել, որ ամեն անգամ դատական գործը պետք է

ուղարկվի ըստ ընդդատության՝ վտանգելով բողոքները ողջամիտ ժամկետում քննելու իրավական երաշխիքը: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *դիմող Գոհար Հովհաննիսյանի ներկայացուցիչ Հրաչյա Թորոսյանի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ներկայացված բողոքի վերաբերյալ դատական գործն արդյո՞ք ընդդատյա է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին՝ այն դեպքում, երբ բողոքը ներկայացնելուց հետո փոխվել է քրեական վարույթ իրականացնող մարմնի գտնվելու վայրը՝ քրեական գործն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն:*

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է, որ. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները*

---

[3] Տե՛ս նյութեր, հատոր 7-րդ, թերթեր 68-70:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:*

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* վերաբերյալ գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված):

Ավելին, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010) 12 Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը):

(…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

13. Սույն որոշման 9-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է արձանագրել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ներկայացվող բողոքների քննության իրավասությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, օրենսդրի կողմից հասցեագրվել է վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարանին: Այսինքն՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ներկայացվող բողոքների դեպքում *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* է դիտարկվում վարույթն իրականացնող մարմնի գտվելու վայրի դատարանը:

---

[6] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, 15-16-րդ կետեր:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ վերը նշված կարգավորմամբ չի նախատեսվել վարույթն իրականացնող մարմնի փոփոխությամբ պայմանավորված՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ներկայացվող բողոքի ընդդատության փոփոխության հնարավորություն: Այդպիսի հնարավորության բացակայությունն առաջին հերթին ընդդատության որոշման կանոնին բնորոշ կայունության հատկանիշի արդյունք է: Մասնավորապես, հաշվի առնելով ընդդատությանը բնորոշ այդ հատկանիշը՝ պատշաճ ընդդատության որոշումը պետք է պայմանավորված լինի օբյեկտիվ գոյություն ունեցող հանգամանքներով: Հակառակ պարագայում, կարող է ստացվել այնպես, որ օրինակ՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, քրեական գործը նախաքննության մի մարմնից նախաքննության մեկ այլ մարմնին հանձնելու դեպքում, կարող է փոխել այդ քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ներկայացվող բողոքների ընդդատությունը: Մինչդեռ, նշվածը ոչ միայն չի համապատասխանի արդար դատաքննության իրավունքի՝ *«օրենքի հիման վրա ստեղծված դատարանի»* որոշման պահանջին՝ ստեղծելով մի վիճակ, երբ հսկող դատախազն իր հայեցողական լիազորության գործադրմամբ մշտապես իրավասու կլինի փոխել բողոքների ընդդատությունը, այլ նաև կվտանգի այդ իրավունքի մյուս բաղադրիչները: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ներկայացվող բողոքները պահանջում են հնարավորինս արագ քննություն, օպերատիվ արձագանք՝ մինչդատական վարույթի ընթացքում անձի իրավունքների և օրինական շահերի խախտումներին: Մինչդեռ, քննչական մարմնի փոփոխությամբ պայմանավորված՝ քննություն իրականացնող մարմնի որոշումների, գործողությունների (անգործության) դեմ բերվող բողոքների քննության ձգձգումը՝ ողջամտորեն կվտանգի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի արդյունավետությունը:

Վերոնշյալի հիման վրա, պետք է արձանագրել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ներկայացված բողոքների ընդդատությունը ենթակա է որոշման ըստ քրեական վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի, որի հետագա փոփոխությունը՝ պայմանավորված քրեական գործի

ենթակայության փոփոխմամբ, ինքնին հիմք չէ բողոքի քննության ընդդատությունը փոխելու համար:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի հունվարի 21-ի որոշմամբ նշել է, որ թեև դիմողի ներկայացուցիչ Հ.Թորոսյանը բողոքը ներկայացրել է քննիչի և դատախազի որոշումների դեմ, սակայն հետագայում քրեական գործն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն, որի՝ որպես վարույթն իրականացնող մարմնի, գտնվելու վայրը Շիրակի մարզն է, ուստի դատական գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին, և այն պետք է ուղարկել ըստ ընդդատության դատարան[7],

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ արձանագրել է, որ դիմողի իրավունքներին ու օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշումները կայացվել են քննիչի և դատախազի կողմից, և դիմողը վիճարկում է այդ որոշումներով իր իրավունքների ենթադրյալ խախտման հարցը, հետևաբար՝ որպես վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայր պետք է դիտարկել Երևան քաղաքի դատական տարածքը, ուստի նշված բողոքն ընդդատյա չէ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ սույն գործով դիմող Գոհար Հովհաննիսյանի ներկայացուցիչ Հրաչյա Թորոսյանը 2020 թվականի հուլիսի 2-ին բողոքը ներկայացրել է քրեական վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան, այն է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Սակայն, հետագայում՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի փոփոխությունը՝ պայմանավորված քրեական գործն ըստ ենթակայության ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն ուղարկելու հանգամանքով, ինքնին հիմք չէ բողոքի քննության ընդդատությունը փոխելու համար:

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Գոհար Հովհաննիսյանի ներկայացուցիչ Հրաչյա Թորոսյանի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով ներկայացված բողոքի վերաբերյալ դատական գործն ընդդատյա է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Դիմող Գոհար Հովհաննիսյանի ներկայացուցիչ Հրաչյա Թորոսյանի բողոքի վերաբերյալ թիվ ԵԴ/0609/11/20 գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ

ՆԱԽԱԳԱՀ՝ **ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**